Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 30-ի N 464 - Ա որոշման

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ N ՄԲԱՊՁԲ-08/41 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երևան Երկու հազար տասնչորս թվականի _____ ___-ին

Հիմք ընդունելով «Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերության միջև 2009 թվականի հուլիսի 23-ին կնքված՝ Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման N ՄԲԱՊՁԲ-08/41 պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) (վավերացված՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված՝ սեղանամատյանում՝ 4663 համարով), 2010 թվականի հունվարի 14-ին կնքված պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման N ՄԲԱՊՁԲ-08/41 պետական գնման պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագիրը (վավերացված՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված՝ սեղանամատյանում՝ 95 համարով), 2010 թվականի մայիսի 12-ին կնքված պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման N ՄԲԱՊՁԲ-08/41 պետական գնման պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագիրը (վավերացված՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված՝ սեղանամատյանում՝ 3558 համարով), 2011 թվականի հունվարի 31-ին կնքված պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման N ՄԲԱՊՁԲ-08/41 պետական գնման

պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագիրը (վավերացված՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված՝ սեղանամատյանում՝ 637 համարով), 2011 թվականի հունիսի 16-ին կնքված պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման N ՄԲԱՊՁԲ-08/41 պետական գնման պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագիրը (վավերացված՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված՝ սեղանամատյանում 5143 համարով) և 2012 թվականի մայիսի 17-ին կնքված պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման N ՄԲԱՊՁԲ-08/41 պետական գնման պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագիրը (վավերացված՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված՝ սեղանամատյանում 4532 համարով), կողմերը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս _____ -ի, ով գործում է _____ -ի հիման վրա (այսուհետ՝ գնորդ), մի կողմից, և «Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս _____ - ի, ով գործում է _____ - ի հիման վրա (այսուհետ՝ վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի 3.2.5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.2.5. Ապահովել պայմանագրով սահմանված գույքի կառուցապատման համար անհրաժեշտ չկառուցապատված հողամասերի, կիսակառույց (անավարտ) և (կամ) օժանդակ շինություններով կառուցապատված հողամասերի և կիսակառույց (անավարտ) և օժանդակ շինությունների կադաստրային արժեքով (ինքնակամ բնակելի կիսակառույց շինությունների համար՝ դրանց օրինական լինելու դեպքում կողմերի համաձայնությամբ հաշվարկված կադաստրային արժեքով) վաճառքը վաճառողին՝ հողամասերի, կիսակառույց (անավարտ) և օժանդակ շինությունների գինը համարելով որպես սույն պայմանագրով նախատեսված գնից կանխավճար: Բնակելի կիսակառույց (անավարտ) շինությունների կադաստրային արժեքի բացակայության կամ զրոյական լինելու դեպքում բնակելի կիսակառույց (անավարտ) շինությունների արժեքի հաշվարկի համար հիմք է անշարժ գույքի գնահատման գործունեությամբ զբաղվող՝ պետական լիազոր մարմնի կողմից

անշարժ գույքի գնահատողի որակավորման վկայական ստացած անձանց կողմից տրված գնահատման եզրակացությունը:»:

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և նոտարական վավերացման պահից:

3. Սույն համաձայնագիրը կնքված է հայերենով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և կողմերի միջև կնքված պայմանագրի անբաժանելի մասն է: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Վաճառող	**Գնորդ**
«Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերություն Քաղ. Երևան, Սայաթ-Նովայի 19 ՀՎՀՀ՝	Հայաստանի Հանրապետության անունից՝ Քաղ. Երևան, Կառավարական տուն 3 ՀՎՀՀ՝

Երկու հազար տասնչորս թվականի _____ ____ - ին սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ _____ նոտարական տարածքի նոտար _____- իս կողմից: Համաձայնագիրն ստորագրվել է իմ ներկայությամբ: Համաձայնագիրն ստորագրողների ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև ներկայացուցչի (ներկայացուցիչների) լիազորություններն ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում՝ _____ ով:
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքների:

ՆՈՏԱՐ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ